Հայտերի ներկայացման հրավեր

Հայաստանի Հանրապետություն
14 մարտի 2014 թ.
Հայաստանի սոցիալական ներդրուների հիմնադրամ III Ծրագիր
Պայմանագիր **# LR-049**
Վարկ **No IDA -50710-AM**
Լրացուցիչ ֆինանսավորում III

LR-049, Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման անցկացում, տանիքի փոխարինում

1. Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) III Ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցությունից ստացել է վարկ և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը **LR-049, Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման անցկացում, տանիքի փոխարինման** վավերացված վճարումները կատարելու համար:

2. Պատվիրատուն՝ **Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման անցկացում, տանիքի փոխարինման** ծրագիրն իրականացնող կոմիտեն, որը համաձայնագիր է կնքել ՀՍՆՀ-ի հետ, իրավասու և որակավորված հայտատուներին հրավիրում է ներկայացնելու մրցութային հայտերի կնքված փաթեթներ **Եղեգնուտի դպրոցի սպորտդահլիճի վերանորոգում, ջեռուցման անցկացում, տանիքի փոխարինման** աշխատանքներն իրականացնելու համար: Շինարարության տևողությունը **120** օրացուցային օր.

3. Մրցույթը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցում (Procurement of Goods, Works, and Non-Consalting Services under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011) սահմանված ազգային մրցույթի ընթացակարգով և, ինչպես նշված է մրցութային փաստաթղթերում, բաց է բոլոր իրավասու հայտատուների համար:

4. Որակավորման պահանջները ներառում են՝ ա/ վերջին երեք տարիներից որևէ մեկ տարում կատարված **148,000,000** դրամի շին. աշխատանքների ծավալ, բ/ վերջին հինգը տարվա ընթացքում որպես գլխավոր կապալառու կատարած առնվազն երկու քաղաքացիական շենքերի վերանորոգման պայմանագրեր: Ներկայացվող աշխատանքներից յուրաքանչյուրի արժեքը չպետք է պակաս լինի **39.000.000** ՀՀ դրամից,

գ/ նվազագույնը **24.000.000** դրամի դյուրիրացվելի միջոցներ և/կամ վարկային գիծ, դ/ որպես պայմանագրի շնորհման նախապայման, հայտատուն պետք է ներկայացնի ՀՀ Քաղաքաշինության նախարարության կողմից հաստատված **«Քաղաքացիական» և «Էներգետիկա»** լիցենզիաներ:

5. Շահագրգիռ հայտատուները մրցութային փաթեթը հայերեն լեզվով կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից՝ Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ, Ձեռքբերումների վարչություն հասցեում, ժամը 10:00 մինչև 17:00, յուրաքանչյուր փաթեթի համար վճարելով 2,500 դրամ: Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ վերոնշյալ հասցեում:

6. Հայտերի վավերականության ժամկետը կկազմի **60** օր հայտերի բացման պահից և բոլոր հայտերը պետք է ուղեկցվեն մրցութային հայտի ապահովման հայտարարագրով:

7. Հայտերի ներկայացման հասցեն՝ **Լոռու մարզ, գ. Եղեգնուտ, I-ին փողոց թիվ 7 /դպրոցի շենք/:** Հայտերը կբացվեն **2014 թ. ապրիլի 14-ին**, ժամը **11:00-ին** այն մասնակիցների ներկայությամբ, ովքեր կցանկանան մասնակցել: Փաթեթների ներկայացումը էլեկտրոնային եղանակով չի թույլատրվում:

8. Ուշացված հայտերը չեն ընդունվում և առանց բացելու վերադարձվում են հայտատուին: